ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2025 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 21-ԻՑ 23-Ը ԹՈՒՐՔԻԱ (Ք. ՍՏԱՄԲՈՒԼ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

Ընդերքի վարչության ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման և կենտրոնացված մատյանի վարման բաժնի պետ Կարեն Գասպարյան

2. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**

Թուրքիա, ք. Ստամբուլ, 2025 թվականի հունվարի 21-ից 23-ը

3. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

Արդյունահանող Ճյուղերի Թափանցիկության Նախաձեռնության (ԱՃԹՆ/EITI) միջազգային քարտուղարություն

4. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

«Կենտրոնական Ասիա և Կովկաս. տարածաշրջանային գործընկերների փորձի փոխանակում և ուսուցում» միջոցառմանը մասնակցություն

5. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

ԱՃԹՆ-ի նոր՝ 2023 թվականի ստանդարտի հիմնական պահանջները, դրա գործնական հետևանքներն ու տարածաշրջանում իրագործումը:
ԱՃԹՆ-ի շրջանակներում իրական շահառուների ինստիտուտի ներդրման և պայմանագրերի թափանցիկության հետ կապված հարցեր

6. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

Միջոցառմանը մասնակից գործընկեր երկրների և Հայաստանի ներկայացուցիչների կողմից ներկայացվեցին ԱՃԹՆ-ի շրջանակներում իրական շահառուների ինստիտուտի ներդրման և պայմանագրերի թափանցիկության հետ կապված հարցեր: Մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչների կողմից ուսուցողական բնույթ կրող այս հանդիպմանը

ներկայացվեց Հայաստանի առաջավոր փորձը՝ ԱՃԹՆ-ի շրջանակներում իրական շահառուների ինստիտուտի ներդրման և պայմանագրերի թափանցիկության առումով, մասնավորապես.

1. Իրական շահառուների թափանցիկությունը կարգավորող նորմատիվ իրավական դաշտը, իրական շահառուների ռեգիստրը և առցանց հարթակի թվայնացման ընթացքը Հայաստանի Հանրապետությունում (ներկայացնող՝ Ալեքսեյ Ավետիսյան, Արդարադատության նախարարություն)

2. Ընդերքօգտագործման պայմանագրերի թափանցիկությունն ապահովող իրավական դաշտը և պայմանագրերի թափանցիկության տվյալների օգտագործումը Հայաստանի Հանրապետությունում (ներկայացնող՝ Կարեն Գասպարյան, ՏԿԵՆ),

3. ԱՃԹՆ-ի ներդրման երկու հիմնական ձեռքբերումները Հայաստանի Հանրապետությունում (ներկայացնող՝ Օլեգ Դուլգարյան (ԲՇԽ անդամ)):

7. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Փաստաթղթեր չեն ստորագրվել

8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԱՃԹՆ/EITI միջազգային քարտուղարության պատասխանատուների կողմից նշվեց միջոցառման անցկացման արդյունավետությունը և փոխադարձ ուսուցման հանդիպումների շարունակականության անհրաժեշտությունը:

9. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

27.01.2025 թվական